



«Զգեցէք որ մանուկները ինձի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ
ԿԻՐԱԿԱՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
Ամսաթերթ
ՄԱԾՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ԺԳ. Տարի
2006
Տարեկան Ժողովածու

www.sourphagop.org

5 Ամսաթերթ

Բովանդակութիւն

- Իրագործումի տարի մը եւս Շաղիկ Պոյաճեան
- Օրինութեան Գիր Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեան
- Խօսք Հովհիկ եւ հոգաբարձութեան Տէր Գառնիկ քինչ. Գոյունեան
- Խօսք Մեծի Տանն Կիլիկիոյ Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթճեան կաթողիկոսարանի տեղեկատուական եւ յարաբերութեանց բաժանմունքի վարիչին
- Խօսք հոգաբարձութեան ներկայացուցիչին Լեւոն Պոյաճեան
- Սրտի խօսք Տիրուկ Մանճիկեան
- Մեր ընթերցողները գրեցին Տնօրին եւ ուսուցչական կազմ
- Ինչպէս հիմնուեցաւ www.sourphagop.org ը Թորոս Պապիկեան
- Համակարգիչը եւ մեր երեխաները Սոսի Դանիէլեան
- Գիտութիւն ընդդէմ հոգեւոր ուղևորութեան Շաղիկ Պոյաճեան
- www.sourphagop.org ը թիւերով Թորոս Պապիկեան
- 2005-2006 Տարեշրջանի տեղեկատու
- «Արեւիկ Այբբենարան»ի ու «Արեւիկ 2» խտասալիկներու (CD/software) յայտնաբերում Սոսի Դանիէլեան

Իրագործումի տարի մը եւս

Հայաստանեաց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակորեայ Դպրոցի 2005-2006 տարեշրջանի աւարտին հետ վերջ կը գտնէ նաեւ դպրոցիս ամսաթերթ «Մաշտոցի Արձագանգ»-ի հրատարակչական տարեկան աշխատանքը, այսպիսով ամբողջացնելով իր գոյութեան 13-րդ տարին: Իրագործումի տարի մը եւս, որուն ընթացքին յաջողեցանք կանոնաւոր ամսական հերթականութեամբ հանդէս գալ ու մեր տպուած օրինակներու եւ համացանցի ցրուումի միջոցաւ հասնիլ, Գանատայի սահմաններէն շատ անդին անցնելով, աշխարհի շորս ծագերուն ցրուած հայ ընթերցասէրներու ու սիռուիլ անոնց համակարգիչներու պատառներուն վրայ:

«Սուրբ Յակոբ Կիրակորեայ Դպրոցի կայքէջին վրայ գտայ վայր մը ուր կապ կը պահեմ կրօնիս եւ մշակութային արմատներուս հետո»: Հոլանտայի մեր ընթերցողներէն մէկուն այս բառերը կու գան հաստատելու թէ «Մաշտոցի Արձագանգ»-ը հասած է իր նպատակին. պարզ լեզուով, ժողովրդական ոճով, տարրական գիտելիքներ փոխանցել Հայաստանեաց Եկեղեցւոյ, քրիստոնէութեան եւ հայկականութեան վերաբերող ընդհանուր նիւթերու շուրջ: Մեր ընթերցողներուն քաջալերական եւ շնորհակալական գրութիւնները ամենէն խօսուն եւ անկեղծ փաստը հանդիսացան ամսաթերթիս գոյութեան արդար եւ իմաստալից ըլլալուն: Միայն շնորհակալական խօսքով է որ մեր կարգին կրնանք փոխադարձաբար արտավայտուիլ մեր ընթերցողներուն ու յիշեցնել թէ անո՞նք են մեր գոյութեան իսկ իմաստ տուողը, որովհետեւ ի՞նչ արժէք կը ներկայացնեն էջերն ու գրութիւնները եթէ զանոնք թղթատողներ եւ կարդացողներ չգտնուին:

Ընթերցողներ ունի՝ մեր ամսաթերթը, թիւով մեծ: Այս տարի մենք օգտագործեցինք համացանցի շնորհիւ մեր տրամադրութեան տակ դրուած միջոցներ, հետեւելու համար մեր ընթերցողներուն թիւին ծաւալն ու անոնց դէպի մեր կայքէջ այցի յաճախականութիւնը: Արդիւնքները տպաւորիչ եղան ու ցուցաբերեցին թէ «Մաշտոցի Արձագանգ»-ը արձագանգած է սկզբնական շրջանին մեր սահմանած ծիրէն շա՞տ անդին: Այս նիւթին շուրջ մենք այս տարեկան բացառիկ թիւով կը ներկայացնենք յատուկ յօդուած եւ վերլուծում մեր ընթերցողներուն հետ բաժնելու համար հետաքրքրական մանրամասնութիւններ:

Եւ այս բոլորը շնորհիւ հաւատաւոր եւ աննկուն կամաւոր աշխատանքի: Կը հաւատանք մեր աշխատանքի կենսականութեան եւ իրայատկութեան, կը յուանք որ ան օգտաշատ կը հանդիսանայ ունի հետաքրքիր ընթերցողի որ կ'ուզէ շփման մէջ մնալ իր արմատներուն եւ մանաւանդ Եկեղեցւոյն ու հաւատքին հետ, ու մանաւանդ սիրով է որ լծուած ենք այս աշխատանքին ու առանց որեւէ փոխադարձ ակնկալութեան: Մեր ընթերցողներուն արտավայտած գորունակութիւնն է մեր միակ եւ բարձրագոյն հաստուցումը ու անոնց քաջալերական խօսքներէն ու արտավայտութիւններէն ներշնչուած կը շարունակնենք մեր երթը ու յաջորդ տարեշրջանին սկիզբը նորէն զիրար ընթեռնելու խոստումով կը մաղթենք բոլորին բարի եւ կազդուրիչ արձակուրդ:

Շաղիկ Պոյաճեան

Օրինութեան Գիր
Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցին

«Զի ուր գանձն ձեր է,
անդ եւ սիրտը ձեր եղիցին...»
Ձեր սրտերը կը գտնուին հոն՝ ուր ձեր գանձն է:
Ղուկաս. ԺԲ 34

Աստուծոյ նախախնամական հովանիին ներքեւ եւ Օրինութեամբ, ու շնորհիւ խումբ մը կամաւոր նուիրեալներու սիրալիր աշխատանքին՝ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցն ու անոյ «Մաշտոցի Արձագանգ» ամսաթերթը իր համացանցային դրսեւորումով բոլորեցին արդիւնալից եւ օգտաշատ տարեշրջան մը եւս:

Կիրակնօրեայ Դպրոցը՝ իր հիմնադիրներուն իսկ ծրագրումովը, անվերապահ հաւատքի ու ամբողջանուեր սիրոյ առաքելութիւն մըն է առաւելապես:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցին հետ ամեն բանէ առաջ եւ վեր անհրաժեշտ է, որ հաւատանք Աստուածային նախախնամութեանը Աստուծոյ անխախտ ու հաւատարիմ սիրոյն, մարդկութեան փրկութեանը համար Անոր կատարած անհատնում զոհողութեան ու ամենօրեայ իրաշապատում ներգործութեան, որով մենք՝ իրաքանչիւրս անհատաբար կը իրաւիրուինք դեպի բարին, ազնիւն ու վսեմք:

Անհրաժեշտ է, որ հաւատանք Ս. Եկեղեցւոյ առաքելութեան. Եկեղեցին որպէս հաւաքարար ուժ, որպէս հաւաքական ուժ, որպէս պարիսապ ընդդեմ չարին, որպէս գանձարան համամարդկային ու բարոյական արժեքներու, որպէս շտեմարան մեր դարաւոր աւանդութեանց ու սրբութիւններուն եւ մշակութային ժառանգութեան, Եկեղեցին որպէս զապանակող ուժը մեր պատմութեան եւ գոյամարտին: Անհրաժեշտ է հաւատալ Հայութեան, նոյնանալ մեր հայրերուն հետ՝ անոնց երազներուն, անոնց իտեալներուն, անոնց գաղափարական աշխարհին, անոնց արիւնով գնուած հողին, անոնց քրտինքով կառուցուած հայրենիքին, անոնց երկունքով ստեղծուած մշակոյթին ու ժառանգութեան, այլ խօսքով մեր սիրտը դնել հոն՝ Կիրակնօրեայ դպրոցին մէջ՝ ուր Աստուած, Եկեղեցի եւ Հայութիւն կը միախառնուին, կը դառնան Հայ Եկեղեցւոյ Քրիստոնեական Դաստիարակութիւն:

Այս բոլորը կ'իրականացուին կամաւորներով, անհրաժեշտ է, որ իրականացուի կամաւորներով, որոնք ոչ միայն հաւատարիմ եւ անխախտ հաւատքով կապուած են Աստուծոյ, Հայութեան եւ այս երկութիւն շաղախը եղող Հայաստանեայց Եկեղեցւոյ, այլ այդ հաւատքը սիրով կ'ընծայեն մեր նոր սերունդին:

Այդ սերը դուք կը տեսնեք արտայայտուած ձեր զաւակներուն դաստիարակութեանը մէջ, «Մաշտոցի Արձագանգ» հայախոս համացանցային ամսաթերթի անխափան հրապարակումին մէջ եւ քրիստոնեական ու հայեցի արժեքներու գեղեցիկ ու դիւրամատչելի մատուցումին մէջ:

Մեր լաւագոյն բարեմաղթութիւններն ու օրինութիւնները Ս. Յակոբ Կիրակոսօրեայ Դպրոցին, անոր տնօրինին՝ սիրելի Պրև. Թորոս Պապիկեանին, «Մաշտոցի Արձագանգ»ի խմբագիր՝ Տիկին Շաղիկ Պոյաճեանին, ուսուցիչներուն, խմբագրական կազմի անդամներուն եւ սիրելի աշակերտութեան:

Աստուծոյ հովանին մշտական պահապան ըլլայ ձեր բոլորին ու բեղմնաւորէ ձեր հաւատքն ու սիրոյ առաքելութիւնը ի սպաս Աստուծոյ Եւ Հայ Եկեղեցւոյ:

Աղօթարար՝

ԽԱԺԱԿ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ
Առաջնորդ
Գանատայի Հայոց Թեմի

Երկուշաբթի, 8 Մայիս 2006
Մոնթելալ

Սիրելի տնօրէնութիւն,
ուսուցչական կազմ,
ծնողներ եւ աշակերտ-աշակերտուհիներ
Ս. Յակոբ Կիրակոսորեայ Կրթարանի,
Աստ,

Սիրելիներ,
Կրօնական եւ հոգեմտաւոր սմնդառութեան տարեշրջան մը եւս բոլորեցիք:
Ինչպէս տեղեակ էք, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը՝ Ն. Ս. Օ. Ս. Ս.
Արամ Ա. Կաթողիկոս այս տարին հրչակեց «Հայ Դպրոցի Տարի» եւ իր կոնդակին մէջ գրեց.
«Եկեղեցւոյ կողքին, հայ դպրոցը գաղութի մը կեանքին խարիսխն է, անոր ծանրութեան
կեդրոնը»: Վեհափառ Հօր ակնարկութիւնը թէեւ անմիջականօրէն կը վերաբերի ամէնօրեայ
հայ դպրոցին, սակայն այնքան կը ներդաշնակուի հայ Կիրակոսորեայ Կրթարանին եւս:

Ի շարս այլ արժէքներու, հայ հոգեմտաւոր արժէքներուն ալ փոխանցման օճախն է
ամէնօրեայ հայ դպրոցը: Իսկ Կիրակոսորեայ Կրթարանը մասնաւոր ծրագրումով մը կը
կեդրոնանայ անոնց վրայ. քանզի անոնք իր գոյութեան եւ առաքելութեան երկրորդահերթ
պատճառն են: Ներեցէք այս «Երկրորդահերթ» նոր բաժին համար: Արդարեւ, Կիրակոսորեայ
Կրթարանին առաջնահերթ պատճառն է Աստուածաշունչին աշակերտիլ սորվիլը,
որովհետեւ ամէն Ճշմարիտ բան՝ այն աշակերտութենէն կը բխի:

Արդ, մեր համայնքը կոչուած է նաեւ յատուկ գուրգուրանք ցուցաբերել իր 26-ամեայ
Կիրակոսորեային նկատմամբ: Ալիքները մեր նաւերուն հետզհետէ աւելի զօրաւոր կը բախին.
ուստի, մեր զաւակներու հոգիներուն ամրացումը հաւատքով՝ մեր տորմիղին ամրացումն
է:

Կեցցեն Ս. Յակոբ Կիրակոսորեայի նաւավարները:

Հովի Եւ Հոգաբարձութիւն
Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ

Անթիլիաս , 4 Մայիս 2006

Պատուարժան Տնօրէնութիւն եւ Ուսուցչական կազմ
Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ «Ս. Յակոբ» Կիրակնօրեայ Վարժարանի

Զերմագոյն զգացումներով եւ քաջալերական անսահման գնահատանքով իմացայ Կիրակնօրեայ Վարժարանիդ պաշտօնական կայքէջի հնգամեայ տօնակատարութեան մասին:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Տեղեկատուական եւ Յարաբերութեանց Բաժանմունքի վարչական պատասխանատուութիւնը ստանձնած ըլլալով, աշխատանքի միեւնոյն դաշտին մէջ կը գտնուինք, համացանցի Ճամբով մեր Եկեղեցւոյ, ազգին ու մշակոյթին անցեալի թէ այժմու գանձերը մեր Ժողովուրդին թէ օտարին հրամցնելու պարտականութեամբ:

Ի վերջոյ մեծ ըլլան թէ փոքր, մարդիկ դաստիարակութեան կարիք ունին, եւ ներկայ ժամանակներու ուսուցման լայնատարած համակարգը, համացանցային աշխարհն է, իր դրական թէ ժխտական երեսներով:

Քաջատեղեակ ենք ձեր կայքէջին Ճամբով կատարուած դաստիարակութեան, երբ Կ'իմանանք մանաւանդ թէ ինչքան այցելուներ օրական դրութեամբ կը մտնեն ձեր աշխարհը, եւ Կ'ուսանին այնտեղ: Սա մեծ պատասխանատուութիւն Կ'ենթադրէ անկասկած. ի՞նչ ըսել, եւ ի՞նչ չըսել: ի՞նչ սորվեցնել, եւ ինչ բանէ հեռու պահել ընթերցողը: Ահա մարտահրաւերը ներկայ ժամանակներուն, արհեստագիտութիւնը ուսուցման կերպ ընտրած մարդուն համար: Ի՞նչ խօսք, երբ հարցը կը վերաբերի մանաւանդ մեր նոր սերունդին, որուն ընտրութեան ձգուած են բազմազան Ճամբաներ:

Հնգամեայ ձեր աշխատանքի այս հանգրուանին, երբ արդէն ձեր անդուլ ճիգերուն արդիւնքով զօրաւոր կը զգաք, կը շնորհաւորենք ձեզ եւ յարատեւ վերելք կը մաղթենք Աստուածահածոյ ձեր առաքելութեան մէջ:

Մենք պիտի շարունակենք ներկայ արհեստագիտութեան բարի հունաւորում տալ, ինչքան ալ աշխարհ փորձէ դէպի չարիք առաջնորդել զայն:

Մնամք սիրով՝

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՈԴ. ՉԻՖԹԱՅԵԱՆ

Վարիչ Կաթողիկոսարանի
Տեղեկատուական եւ Յարաբերութեանց
Բաժանմունքի

08 Մայիս 2006
Մոնթեալ

Սիրելի Պրն. Թորոս Պապիկեան,
Տնօրէն Ս. Յակոբ Կիրակոսօրեայի,
Աստ,

Սիրելի Տնօրէն,
Այսու կ'ուզեմ Զեզ եւ Զեզի գործակից խմբակը շնորհաւորել՝ այն սքանչելի ծառայութեան համար, որ կը մատուցէք Ս. Յակոբ Կիրակոսօրեային: Զեր ճիգերը շատ շատ գնահատելի են:

Լաւագոյն միջոցները որ քրիստոնեայ հայեր կրնան օգտագործել իրենք գիրենք եւ իրենց ընտանիքները դաստիարակելու համար կրօնական եւ ազգային ինքնութեան կալուածներուն մէջ, Կիրակոսօրեային կայթէցն է (sourphagօ.օրգ) եւ պարբերականը՝ *Մաշտոցի Արձագանգը*:

Շատ հպարտ եմ եւ ուրախ, որ Զեր բարձր պատրաստութեամբ անձնաւորութիւն մը ունինք մեր մէջ, որ կ'ուղղէ եւ կը դաստիարակէ մեր մատղաշ սերունդը եւ կը նպաստէ մեր մշակոյթի եւ աւանդութիւններու զարգացման ու տարածման:

Կը խնդրեմ, որ լաւագոյն մաղթանքներս փոխանցէք ուսուցչական եւ խմբագրական ամբողջ կազմին: Մեր կրթական հաստատութիւնները մեր ապագան են, ուստի երախտապարտ ենք Զեր եւ Զեր գործակիցներու բոլոր ճիգերուն համար:

Սիրով՝

Լեւոն Պոյաճեան
Անդամ
Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Հոգաբարձութեան

Յարելի Պրն. Թորոս Պապիկեան՝
Տնօրէն Ս. Յակոբ Կիրակոսյան Դպրոցի

Տարիներէ իվեր կը կարդամ Սուրբ Յակոբ Կիրակոսյան Դպրոցի «Մաշտոցի Արձագանգ» ամսաթերթը, որուն բովանդակութիւնը միշտ ալ գտած եմ դաստիարակիչ եւ հետաքրքրական:

Մեծապէս կը գնահատեմ մանաւանդ «Մաշտոցի Արձագանգ» համացանցի վրայ հրատարակելու ձեր խիզախն եւ հեռատես նախաձեռնութիւնը եւ որուն 5-րդ տարեդարձը, արդարօրէն, հպարտութեամբ կը տօնէք այսօր:

Կայքէջի միջոցաւ «Մաշտոցի Արձագանգ» կը մտնէ հարիւրաւոր հայ տուներէն ներս ուր, ընտանիքի ամէն տարիքի անդամ, առիթը ունի կարդալու աստուածաշնչական պատմութիւններ, Հայաստանեաց Եկեղեցւոյ ծէսերու, տօներու եւ սուրբերու մասին դաստիարակչական տեղեկութիւններ, մասնակցիլ զարգացման մրցումներուն, խաղերու եւլն:

Այս բոլորին կողքին, Կայքէջի խնամուած ու դիրահաղորդ հայերէն լեզուով ներկայացումը, կու գայ ալ աւելի արժեւորել կատարուած գործը եւ կը ցուցաբերէ, սփիւռքի տարածքին, քրիստոնէական դաստիարակութեան կողքին, հայ գիրն ու լեզուն պահպանելու ձեր աննկրուն հաւատքն ու կամքը:

Կամաւոր խմբակի մը կողմէ կատարուած այս բժախնդիր եւ բարձրորակ գործը արժանի է բարձր գնահատանքի:

Շնորհաւորութիւններ բոլորին, յատկապէս խմբագիր՝ Տիկին Շաղիկ Պոյաճեանի, Ռաֆֆի Պապիկեանի եւ խմբակի իւրաքանչիւր անդամին:

Բարի տարեդարձ եւ յաջող երթ կը մաղթեմ ձեզի:

Յարգանքներով՝

Տիրուկ Մանճիկեան

ՄԵՐ ԸՆԹԵՐԳՈՂ ԾԵՐԸ գՐԵցիՇ...

Congratulations on your Mashdotsi Artsakank and thanks for sharing it.

It is a great effort you are putting but I am certain everyone is enjoying reading it, young or old. Keep up the good work!

Ծնորհակալութիւն եւ շնորհաւորութիւններ

Best regards

Araxy Deronian-Khatcherian

Cairo, Egypt

On the occasion of the 5th anniversary of sourphagop.org, please accept our humble congratulations and all the appreciation we can express with words.

The Armenian apostolic church is not just a Church. It is our rich, proud and often tragic history. It is the essence of our traditions, our hope for survival and route for revival. It is the strongest anchor of our identity and culture.

It is to be noted though that our Church has unfortunately given to our people much more than some of us are willing to acknowledge, comprehend, appreciate or support.

Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգւոյս՝
Եկեղեցին հայկական ես աչքս զոյց կը տեսմեմ ու կը լսեմ...

We have grown up in a rather strict secular Armenian schooling environment, but it is no surprise that the roots of our church run very deep in us. They seem to go even deeper by the day as our appreciation grows beyond the mere theological, philosophical or material. Our church is Us and We are the church.

You at sourhagop.org have done a truly amazing job to serve both our faithful and the Church. Your work is amazing, especially considering the rather meagre human and material resources. Long live our site and a big Thank you.

Krikor, Monika, Alex and Sevan Tersakian

Montreal

I have found the Sourp Hagop web site a place where I keep in touch with my religious and cultural roots. The English-Armenian pages are a delight to browse and the regular e-mails from the Dnoren Baron Babikian a welcome reason to re-visit the site.

Well done to the team who maintain the web site.

Sincerely,
Stephannos Zeitountsian
The Netherlands

Կը հիանամ Զեր պարզ բացատրութեան վրայ - թէ՛ ԱՐԱՍՍԱՆ տառատեսակի գործածութեան եւ թէ՛ հաւատքի վերաբերեալ հարցերու վրայ: Բացայաց է թէ մեծ համարում ունիք մեր այբուբենին վրայ եւ եթէ բոլոր ուսուցիչներս այդ համարումով կարենանք արտայայտուիլ մեր աշակերտներուն, անոնք պիտի դադրին Լատինագիր Հայերէնը գործածելէն ու դառնան Մերոպատառի գործածութեան: Կը ցաւիմ ըսելու թէ այս 21րդ դարու մեր մեծագոյն խնդիրը պիտի ըլլայ եւ եթէ ձախողինք՝ պիտի կորսուի Հայ այբուբենը ու քայլ մը առաջ առնէ համաշխարհայնացումը:

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԵՆ
Վաճառվը

Բարեւ Քրիստոսվ եղբայրներ ու քոյրեր,

Անհամբեր սպասում եմ նոր թիւերի առաքման, կարդում եմ մեծ հետաքրքրութեամբ ու բաւականութեամբ: Զեր հրատարակութիւնը արտացոլում է այն մեծ գործունեութիւնը եւ այն զօրաւոր հոգեւոր կեանքը որ առկայ է դպրոցի աշակերտների սրտում, դպրոցի միջավայրում, եկեղեցու անդամների շրջանում: Աստուած առատօրէն օրինէ իր առաքելութեան նուիրուածների արդիւնաւետ աշխատանքը: Փառք Տիրոց: Ծնորհակալութիւն որ դուք ինձ բաժնեկից էք դարձնում այդ օրինութեան:

Ծնորհակալութեամբ, սիրով եւ աղօթքով՝

Գէորգ Խրլովեան
Glendale, California

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տաճք Աստուծոյ, որ այս տարի եւս կրօանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ աւարտել մեր 26րդ տարեշրջանը: Այս տարի նաեւ 13րդ տարեդարձն է մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ անցեալ Սուրբ Յակոբի տօնի օրը՝ Դեկտեմբեր 2005 ին տօնեցինք մեր Կայքէջին՝ www.sourphagop.org ին, 5րդ տարեդարձը:

«Զգեցէք որ մանուկները ինձի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Յիսոս Քրիստոսի արտասանած խօսքերը, որոնք Հայաստանեաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն են, կը մնան հիմք մեր Եկեղեցւոյ պայծառութեան: Այն Եկեղեցիները որոնց մանուկները արգելքներ ունին երթալու Յիսոսի, դատապարտուած են պարզուելու: Յիսոսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմք Հայաստանեաց Եկեղեցւոյ մտապատկերին (vision), նամանաւանդ Հիւսիսային ամերիկայի մէջ:

www.sourphagop.org -ը 5 տարեկան: Մեր այս տարուան դպրոցական տարեշրջանի ընթացքին մեր կայքէջը, www.sourphagop.org ը տօնեց իր 5-ամեակը եւ ծաւալեցաւ աներեւակայելիօրէն: Հասաւ 87 երկիրներու շուրջ 518 քաղաքները, եւ ամսական դրութեամբ ունեցաւ մօտաւորապէս 7,000 այցելութիւններ: Մեր կայքէջին ամենէն մեծ արժէքը անոր 99% տոկոսով Արեւմտահայերէնով ըլլալը եւ կամաւոր խմբակի մը անսակարկ աշխատանքին շնորհիւ գոյութիւն ունենալը է: Մարդութիւն եւ պիտոնէի սահմանափակ մեր կարողութիւնները նկատի առնելով մեր կատարած գործը օրինակ պէտք է հանդիսանայ ուրիշ անհատներու եւ հաստատութիւններու որոնք հայապահպանումով, արեւմտահայերէնով եւ կամ Քրիստոնէական Դաստիարակութեամբ հետաքրքրուած են:

«Մաշտոցի Արձագանգ» ի 13-ամեակ: Մեր այս դպրոցական տարուան ընթացքին հրատարակեցինք նաեւ մեր ամսաթերթը 13րդ տարին ըլլալով եւ մեր կայքէջի ծաւալումով, ծաւալեցաւ նաեւ մեր ամսաթերթի կարդացողներուն թիւը: «Մաշտոցի Արձագանգ»-ի միջոցաւ, այս տարի եւս արեւմտահայերէնով 260 քրիստոնէական դաստիարակութիւն ջամբող էցեր աւելցուցինք համացանցին վրայ:

Աշակերտութեան թիւի աճ: Այս տարուան ընթացքին մեր արձանագրուած աշակերտներուն թիւը 96 էր, եւ իրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնը 65: Թէեւ այս վերջինը 10% աճ մըն էր բաղդատուած մեր անցեալ տարուան թիւին, սակայն այս թիւը կը կազմէ միայն շնչին տոկոս մը Մոնթրէալահայութեան 3-16 տարեկան մանուկներուն ու պատանիներուն: Եկեղեցին ընդհանրապէս շատ աշխատանք պէտք է կատարէ բազմացնելու համար Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն թիւը որպէսզի մեր աշակերտները, իրենք ալ իրենց կարգին, ապագային աւելցնեն Եկեղեցի յաճախողներուն թիւը:

Ինքնանորոգում: Այն հաստատութիւնները որոնք ժամանակ չեն տրամադրեր իրենք զիրենք նորոգելու, կը լճանան: Նկատելով որ Կիրակնօրեայ Դպրոցը կը գոյատեւէ կամաւոր աշխատողներով, պայման է որ իրաքանչիւր տարի նոր արիւն եւ նոր կամաւորներ աւելնան այս գործին որպէսզի թեթեւցնեն մեր բեռը:

Սակայն, «Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ. հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ պատրաստէ եւ դրկէ:»

Պատմութեան համար

**Ինչպէ՞ս հիմնուեցաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի Կայքէ՛
www.sourphagop.org-ը**

Սուրբ Յակոբ Կիրակօնօրեայ Դպրոցի տնօրէնութիւնը ստանձնեցի 1997-1998 տարեշրջանին։ Այդ թուականէն սկսեալ, երբ կը փորձէի իրաքանչիւր Կիրակի աշակերտներուն ներկայացնելիք նիւթս պատրաստել, կ'ուղուէի համացանցի այն էջերը ուր կրնայի համդիպի Աստուածաշունչին զանազան լեզուներով, բայց ոչ հայերէնով։ Ընդհանրապէս կ'ուզէի գիտնալ թէ որոշ բառ մը կամ համար մը Սուրբ Գիրքէն ներս ո՞ւր կը գտնուէր։ Այս ընելու համար կը փնտուէի համացանցին վրայ օտար լեզուով հրատարակուած Աստուածաշունչերուն մէջ եւ գտնելէ ետք ուզած համարս կամ համարներս, զանոնք կը կարդայի հայերէնով։

Այդ ժամանակէն սկսեալ միշտ կը մտածէի թէ ինչո՞ւ անոնք որոնք ձրիաբար համացանցի վրայ Աստուածաշունչը սփոած են Անգլերէնով, Ֆրանսերէնով, եւ 28 այլ լեզուներով, հայերէնով եւս չեն գրած։ Սակայն ես խսկ կը պատասխանէի իմ հարցումիս, յիշեցնելով ինքահնքիս թէ մենք «փոքր ածու» ենք եւ թէ մենք միայն 7 միլիոն հոգի ենք տարտղնուած աշխարհի չորս կողմերը եւ թէ մեր մէշէն տակաւին արեւմտահայերէն կարդացողներուն թիւը հազի 2 միլիոնի կը հասնէր։

Կիրակիները անցան, եւ արդէն մարդիկ կը խօսէին 2001 թուականին եւ 1,700 ամեակին մասին։ Ինձի որոշ չափով խորթ կը թուէր այն իրողութիւնը թէ մենք հայ գիրերը գտանք, առաջին հերթին թարգմանելու համար Աստուածաշունչը, ապա տպագրութեան գիտէն 200 տարիներ ետք մեր առաջին տպուած գիրը դարձեալ Աստուածաշունչը եղաւ, բայց թէ այսօր, Internet «Համացանց»ի տարածումէն 10 տարիներ ետք տակաւին չունեինք Աստուածաշունչ համացանցի վրայ, մանաւանդ երբ այլեւս տառատեսակի հարց չկար։

Բաւական փնտուուքէ եւ հարցուփորձէ ետք, այն եզրակացութեան հանգեցաց թէ ոեւէ անհատի կամ կազմակերպութեան քով Աստուածաշունչը հայերէնով -արեւելահայերէն կամ արեւմտահայերէն- 2001 էն առաջ համացանցի վրայ ունենալու ծրագիր չկար։ Հետեւաբար եթէ կ'ուզէի գոհացնել այս փափաքս, պատիւը եւ մարտահրակը վերագրուած կը թուէր ըլլալ Էջմիածինէն եւ Անթիլիասէն շատ հեռու գտնուող, հեռաւոր Գանատայի մէջ փոքրիկ Կիրակնօրեայ Դպրոցի մը կամաւորներուն։ Այսպէս, մեր ուսուցչութիւններէն Յամիկ Նաճարեանը յանձն առաջ Կիրակի օրերու ճաշու աւետարանը մեքնագրել։ Բայց նախ եւ առաջ մենք կայքէջի մը պէտք ունէինք։

High Speed Internet

Ապրիլ 2000-ին, իմ ամենօրեայ աշխատանքի ընկերութիւնը ինձի հայթայթեց համացանցի արագ ձեւով կապուելու գիծ մը, ինչպէս նաեւ աւելի արագ համակարգիչ մը որպէսզի ես տունէն, առանց դժուարութեան կարենայի կապուիլ մեր գրասենեակի համակարգիչներուն (server) գործի ժամերէս դուրս, եթէ պէտք ըլլար։ Այս փոփոխութիւնը շատ դիւրացուց մեր կայքէջի մը ունենալու կարելիութիւնը։ Մեր Կայքէջին պէտքերը անուղղակիօրէն կը հոգացուէին։

Webmaster ը

Կայքէջի պատրաստութեան համար դիմեցի եղբօրս՝ Ռաֆֆի Պապիկեանին, որ այդ օրերուն իւրացուցած էր կայքէջ պատրաստելու հմտութիւն։ Ռաֆֆին սիրայօժար ընդունեց, եւ ես պարզեցի իմ մտապատկերս մեր կայքէջին համար հետեւեալ երկու պայմաններով

- ա. թէ լման հայերէնով պէտք էր ըլլար
- բ. թէ պէտք էր ունենար Ծաշու աւետարանը

Մնացեալը ձգեցի Ռաֆֆիին, վստահելով որ ան լաւ գործ մը պիտի ընէր։

Մի քանի ամիս ետք Ռաֆֆին պատրաստեր էր կմախք մը, եւ արդէն մեր կայքէջին վրայ ունէինք տարբեր բաժիններ.-

- Ծաշու Աւետարան, իւրաքանչիւր ամսուայ իւրաքանչիւր օրուան համար շատ դիւրիւթեամբ ուղղուելով մէկ օրէն միւսը

- Armenian Church Timeline ուր օտարներուն համար կար Հայաստանեայց եկեղեցւոյ ժամանակագրութիւնը, որ նաեւ որպէս հայոց պատմութեան ժամանակագրութիւն կարելի էր գործածել

- Տօներ, ուր կը ներկայացնէինք մեր եկեղեցւոյ տօները
- Բառարան, ուր բացատրութիւն կը գտնուէր սպասներու եւ այլ եկեղեցական նիւթերու շուրջ
- Պարբերաթերթ, ուր կը գտնուին «Մաշտոցի Արձագանգ»ի նախկին թիւերը
- Կապեր դէափ հետաքրքրական կայքէջեր
- Խաղերու բաժին մը մանուկներուն հասցէին
- Կարծիքի բաժին ուր մեքենագրութիւնը ինքնաբերաբար հայատառ կ'ըլլար։

Սուրբ Յակոբ 2000, անուն եւ բացում

Մեր կայքէջի աւարտի մասնիկը պէտք էր որ .org ըլլար, որովհետեւ մենք առեւտրական հաստատութիւն մը չէինք, եւ բաւական տարբերակներ քննելէ ետք որոշեցինք www.sourphagop.org անունը եւ 9 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնի օրը մեր կայքէջը բացուած յալտարարեցինք եւ Կիրակի 10 Դեկտեմբեր 2000-ին Սուրբ Յակոբի օրուայ կէսօրուան ճաշի սեղաններուն վրայ, ՀՄԸՆԻ մարզարանին մէջ, զետեղեցինք թղթիկ մը որուն վրայ գրուած էր www.sourphagop.org։ Ասիկա այն նոյն օրն էր ուր Տէր Գառնիկը առաջին անգամ ըլլալով ժողովուրդին ներկայացուեցաւ։

Աշխատակիցները

Րաֆֆին գործը վերջացուցած էր եւ յանձնած մեզի։ Ես պատասխանատու էի թարմացնելու մեր կայքէջը։ Ասոր համար պէտք էր որ մենք նիւթ հասցնէինք եւ կայքէջին էշերը շատցնէինք։ Մեր ուսուցչութիւններէն, Օրդ. Յասմիկ Նամարեանը կը մեքենագրէր Կիրակի օրուան ճաշու աւետարանին բաժինները, բաց շաբթուան միս օրերու Աւետարանը մեքենագրողի պէտք ունէինք։ Եւ դարձեալ մեր պէտքը հոգացուեցաւ երբ տիկնոջս քոյրը, Տիկ. Շաղիկ Պոյամեանը որ այդ օրերուն իր երկրորդ աղջկան ծնունդով 30 ամսուայ մայրական արձակուրդի մէջ էր եւ տունն էր, ստանձնեց մեքենագրութիւնը։ Եւ ճաշու աւետարանի մեքենագրութեամբ սկսած կապը ապագային զարգացաւ եւ մենք ունեցանք «Մաշտոցի Արձագանգ»ի մեր ապագայ խմբագիրը։

Ծաշու աւետարանը կայքէջին վրայ

Մենք հասած էինք մեր նպատակին, եւ կայքէջի ընդհանրանալէն 10 տարիներ ետք կրցած էինք ունենալ ճաշու աւետարանը հայերէնով բոլոր անոնց համար որոնք կ'ուզէին զայն կարդալ։

Քննադատութիւններ

Ստացանք մի քանի քաջալերական ե-նամակներ, ինչպէս նաև քննադատութիւններ որոնցմէ մէկը կ'անդրադառնար մեր ուղղագրական սխալներուն: Մեր պատասխանը այդ էր, թէ մենք այս գործը կ'ընթինք միայն որովհետեւ որիշ մէկը չէր ըներ -ոչ արեւելահայերէնով եւ ոչ արեւմտահայերէնով- հետեւաբար երբ անսխալ ձեւով գտնուէր համացանցին վրայ, մենք պիտի դադրէինք մեքենագրութիւնը եւ մեր կայքէջն կապ մը կը հաստատենք դէպի այդ նոր էջը: Սակայն այնքան ատեն որ այս աշխատանքը իրագործող այլ անձ կամ կազմակերպութիւն չկար, մենք պիտի շարունակէինք մեր գործը՝ հաւատալով ճաշու աւետարանի հայերէնով գոյութեան համացանցի վրայ:

Այցելուներու աճ

Մեր նպատակը Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակները տեղեակ պահել էր Աստուածաշունչին: Անոր համար առիթ չէի փախցներ ե-նամակներու միջոցաւ տեղեակ պահել բոլոր անոնց որոնց ե-նամակը ձեռք կը ձգէի: Նոյն ժամանակի ընթացքին մեր կայքէջին պարունակութիւնը տարուէ տարի աւելցաւ եւ նաև աւելցաւ մեր այցելուներուն թիւը: Սակայն հսկայ անկինադարձը եղաւ Սեպտեմբեր 2002ին երբ «Մաշտոցի Արձագանգ»ը վերածուեցաւ ամսաթերթի եւ մուտք գործեց մեր կայքէջն ներս:

(ISP) Internet Service Provider-ի փոփոխութիւն

Հինգ տարիներ ետք, արդէն www.sourphagop.org ը կը գտնուէր շատ մը ուրիշ կայքէջերու կապերուն մէջ: Մենք փոխեցինք մեր ISP-ն մօտէն հետեւեցանք մեր այցելուներուն որոնք եկան 87 երկիրներու 518 քաղաքներէն: Մանրամասնութիւնները կրնաք կարդալ «www.sourphagop.org-ը թիւերով» յօդուածին մէջ:

Ճաշու աւետարանը հայերէնով ուրիշ կայքէջերու վրայ

2002 Նոյեմբերէն սկսեալ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կայքէջին՝ www.cathcicil.org ին վրայ ճաշու աւետարանը արեւմտահայերէնով սկսաւ հրատարակուիլ, որմէ ետք մենք, ինչպէս արդէն որոշած էինք ընել, մեր աշխատանքը դադրեցուցինք եւ մեր էջն կապ մը հաստատեցինք դէպի այդ էջը: Եւ այժմ ես հոն կ'ուղղուիմ գտնելու համար իրաքանչիւր օրուան ընթերցումը:

9 Ապրիլ 2006-էն սկսեալ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կայքէջին՝ www.armenianchurch.org-ին վրայ ճաշու աւետարանը սկսաւ հրատարակուիլ արեւելահայերէնով: Եւ կարելի է նաև հոն ուղղուիլ արեւելահայերէն ընթերցումի համար:

Եզրափակում

«Խնդրեցէ՞ք եւ պիտի տրուի ձեզի» ըսաւ Յիսուս: Մենք խնդրեցինք, աշխատեցանք, ժամանակ տրամադրեցինք, եւ վերջ ի վերջոյ Շաշու Աւետարանը տրուեցաւ մեզի համացանցին վրայ, թէ՝ արեւելահայերէնով եւ թէ՝ արեւմտահայերէնով: Եւ այս փորձի ընթացքին մեր պարբերաթերթը վերածուեցաւ ամսաթերթի եւ մեր աշխատանքին արդիւնքները տարածուեցան եւ հասան մեր Կիրակնօրեայ Դարոցի Մոնթրէալի, Գանատայի, Հիւսիսային Ամերիկայ սահմաններէն շատ աւելի անդին՝ 5 ցամաքամատերու 87 երկիրներու 518 քաղաքները եւ հայութեան անդաստանները մշակեցին Աստուծոյ խօսքով:

Այս ամէնը ըրինք եւ կ'ընենք Աստուծոյ փառքին եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ պայծառութեան համար, միշտ հաւատարիմ մնալով Ս. Մեսրոպ Մաշտոցին:

Թորոս Պապիկեան

Համակարգիչն ու մեր երեխաները

Երեխաներու համակարգիչի գործածութեան նիւթը յաճախ վիճաբանութեանց դուռ կը բանայ ընտանիքներու մէջ, նօր ու մօր զրոյցի ընթացքին, կամ որևէ առիթի մը հաւաքական հանդիպումի մը պահուն, թեր ու դէմ կարծիքներու փոխանակման ժամանակ, տհաճ մթնոլորտի մը յառաջացում ստեղծելով:

Որքան ալ մերենական նորութիւնները, համակարգիչներն ու զանազան գործիքները ունենան իրենց քաշողականութիւնը, գիրքը ու զայն ընթերցողը կը մնան մայր բոլոր գիտութեանց: Ընթերցումը կը լուսաւորէ միտքը ու կ'ազնուացնէ հոգին:

Սակայն քաջ գիտնալով թէ «գիրքը մարդուն լաւագոյն բարեկամն է», պէտք է քայլ պահել գիտութեան հետ: Անխոսափելի է այն իրականութիւնը թէ 21րդ դարու մէջ համակարգիչի գործածութիւնը անհրաժեշտութիւն է տարբեր մարզերէն Շերս: Ան դարձած է հսկայ հաստատութիւններու տրոփող սիրտը եւ ուսանողներու տեղեկութիւններու արկդը, իսկ այլոց ժամանցի միակ վայրը:

Կան չափահասներ որոնք անծանօթ են համակարգիչի գործածութեան. ան կը թուի ըլլալ նիւթապէս սուղ, գործածութեամբ բարդ եւ շատ բարձր գիտարուեատի կազմածք մը: Մինչ այդ, զարմացած անդին կը տեսնեն իրենց զաւակները կլանուած այդ մերենային դիմաց:

Համակարգիչ մը ունենալը կարեւոր չէ այնքան որքան անոր գործածութեան ծանօթ ըլլալը: Ան կը դառնայ ժողովուրդի կեանքին մէջ երեմն գիտելիքներու աղբիւր ու երեմն որպէս դուռ չարեաց:

Ներկայիս, համակարգիչի գործածութիւնը երեք տարեկանէն սկսեալ երեխաներու մօտ այնքան հեշտ ու առօրեայի մաս կազմող իրողութիւն մըն է, որ ծնողքի պարտականութիւնն է զաւկին հայթայթել իր տարիքին յատուկ ծրագրաշարը (software) ու փոխանցել կարճ ուղղութիւն մը, որպէսզի երեխան ինքն իսկ իր փորձառութեամբ, ստեղնաշարի (keyboard) վրայ իր մատներու հարուածներով, իր «Ճիշդ»-երով ու «սխալ»-ներով, ամբարէ ու տէրը դառնայ շատ մը գիտելիքներու:

Երեխաներուն նաև կարելի է տալ կարգ մը կայքէջերու (websites) հասցէներ, որոնց բովանդակութիւնը նախապէս սերտուած ըլլայ չափահասի մը կողմէ: Զանազան լեզուներով հազարաւոր կայքէջի հասցէներ կարելի է ունենալ դիւրաբար: Մեր մտահոգութիւնը սակայն, հայերէն լեզուով դաստիարակական կայքէջի մը ձեռք բերումն է:

Այսօր, հապատութեամբ կ'ուզենք արձանագրել թէ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակօրեայ Դարոցը, տքնաշան ու անսակարկ խնամուած աշխատանքի իբրեւ արդիւնք, Դեկտեմբեր 2000 տարեշրջանէն ի վեր ունի իր յատուկ կայքէջը www.sourphagop.org հասցէով:

Զեզմէ շատեր կրնան հարց տալ թէ ի՞նչն է «յատուկ»-ը այս կայքէջին կամ ինչո՞վ ան կը տարբերի այլ կայքէջերէ:

